

ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՐ

Անճառին տաճար, Բանին հաշտարար,
Գերագոյն զըտար Մարիամ, Դու յերկնից գովեալ:
Երգեն սերովբէք, Զարմանան քրովբէք [Փրկէդ:
Էրանեալ սուրբ Կոյս Մարիամ, Ընտրեալդ ի
Թագրդ պարծանաց, Ժառանգդ աւետեաց,
Իսկուհի մաքուր Մարիամ, Լուսածին աննման:
Խորան խնդալի, Ծառ նարնջենի,
Կաքհաւ քաղցրախօս Մարիամ, Հաւիկ սխրալի:
Զայն քո քաղցր երգի, Ղամպար բաղձալի
ձրագ լուսատու Մարիամ, Մըթան գիշերի:
Յանթառամ ծաղիկ, Նոր գարնան փթթիկ,

Շող արեգական Մարիամ, Ոսկեխնծորիկ:
Զըկայ քեզ նման, Պտուղ գովելի,
Զուր պարզ և մաքուր Մարիամ, Ռետին քաղցրալի:
Սէտէֆ ի ծովի, Վանիչ մարգարտի,
Տաճար լուսակիր Մարիամ, Բաբունոյն փրկի:
Յօղ գարնանային, Իիսեալ ոսկովին, [Կերին:
Փափաքեալ ցանկամ Մարիամ, Բո ճոխ պատ:
Ինձ մեղաւորիս, աստուածապա[շտ]իս,
Տիրաբար գտար Մարիամ, այգ առ[աւ]օտ ինձ:
Պաղատեա՛ վասն իմ որդիդ Միածին
Վերաբերեա՛ զիս Մարիամ, ի յաջակողմին:



ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՐ

(Ի ԳՐԻԳՈՐԻՍԷ ԱՂԹԱՄԱՐՅՈՅՑՈՅՑ՝)

Անեղին տաճար — Բանին բարերար — Գովեալ Տիրամայր
Դու ամէն լեզուէ՛ (է՛) Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Երգեաց Գաբրիէլ — Զանեղն Մանուէլ — Էացաւ ի քէն Տիրամայր
Ընկալաւ մարմին (է՛) Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Թագաւորին մայր — Ժառանգորդ եղար — Ի քո Միածնէն հայցեա(յ) Տիրամայր՛
Լոյս ի մեզ ծագէ Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Խընամօք խնամէ՛ — Ծածկութիւն ծածկէ՛ — Կեցո՛ ի չարէ Տիրամայր,
Հովանաւորէ՛ Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Զայնիւրդ ձայնէ՛ — Ղամբարմամբ վառէ՛ — Ճգնութեամբ պահէ Տիրամայր,
Մեզ առաջնորդէ՛ Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Յորժամ գաս յերկնէ — Նըստեալ դատ առնէ — Շնորհօք գմեզ քաւէ՛ Տիրամայր՛,
Որպէս վայելէ՛ Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Զարն ի մէջ մերժէ — Պատուեալ պըսակէ՛ — Զահ լուսոյ վառէ՛ Տիրամայր՛,
Ռահ որ յերկնս է, Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Սոսկալի սրովբէ — Վէհ քան զքրովբէ — Տօնողացս օգնէ՛, Տիրամայր՛,
Բամիցըս լըսէ՛, Տիրամայր որ զԱստուած ծընար:
Յաւ հօգուոյս ցըրէ — Իիծեալ հրահուսէ — Փրկեա՛ ի վտանկէ, Տիրամայր,
Քեզ փառք ի յերկրէ, Տիրամայր, որ զԱստուած ծընար:
Ով եղանակէ — ԶԳրիգորիսն՝ յիշէ — ԶՓոխարէնն առցէ հատուցումն
Նա ի Քրիստոսէ. Տիրամայր որ զԱստուած ծընար:

Հր. Հ. ԵՂԻՍ ՓԵՅԻՆԵԱՆ

1. Այս Բ. տաղը կը հրատարակենք վանքիս թիւ 1330 նոտրագիր տաղարանէն. գրուած 1653 (1663)
2. 1690ին գրուած օրինակին համեմատ, վերջին տան մէջ փոխանակ «ԶԳրիգորիս»-ը գրուած է «ԶԱր-
տանըս յիշէ», որ այս տաղարանին օրինակողն է. հմտ. յիշատակարանը զոր յետոյ պիտի հրատարակենք ի
հետաքրքրական տեղեկութեանց համար:

ՀԱՄԵՐԳ ՄԵՌԵԼԱԿԱՆ

Ես կ'ոգեկոչեմ բոլոր անոնց մաքը՝ որոնց այս տիեզերքին մէջ շիրիմ
մ'իսկ չունեցան, և որոնց ինկան եաթաղաններու հարուածին տակ՝ ցեղի մը՝
որ ամենէն անասնականն է ու բիրտը այս հակապական երկրագունտին հրաշա-
փառ ներդաշնակութեան և հոյակապ գեղեցկութեան մէջ:

Խոր, հեթամոսական լայնածաւալ իրիկում.
Արեւմ հեռում տակաւ առ տակաւ իր ոսկի սրտիմ. քոսորագոյն արիւմը կը ժայթքէ երկիւմըն-
րու միապաղաղ մեռելութեամ, ու վախկոտ շողեր ամսահմամ տրտմութեամբ առլցում՝ կ'երկնման
աստղերու ամզըշիրիմեան մոա՛յլ երազամքներում.
Ապրելեան ահաբեկիչ, մազկռիմ տուայտամքներ կը փոթորկեն ամհումութիւնը ամջըպետիմ,
ու Ատելութիւնն և հեթամոս Մարդասպանութիւնը կարմիր և կարծում պատմութեանը մետած իրեմց
թիկմեղ ուսերում՝ արիւմոտ ակռանքով կը պատուեն կապոյտիմ խաղաղութիւնը՝ շերտ առ շերտ.
Ապրելեան դժոխածիմ, քիմախմղիր և արիւմարբու հրէշներ լերկ և պժգալի իրեմց գլուխները
կը ցցեն հողիմ խաւարապատ ճեղքուածքներէմ, ու զազիր շրթումքներով կը ջամամ լգել յոգմած և
ամհոգ մամուկներու քումը՝ որ կը հոսի խաղաղ ու երջանիկ միապաղաղ կամաչի մը մայրութեամբ
վրայ.
Աչքեր, արիւմով և դաշոյնի փայտատակումներով լեցում՝ կը սեւեռուին մարգերում մէջ ազատ-
օրէմ երազող եթերայիմ կոյսերու ապրելու շքեղութեամբ ու գեղեցկութեամբ վրայ.
Ու յամկարծ, չիւսիւէմ միմչեւ հարաւ, ու Արեւելքէմ միմչեւ Արեւմուտք, մոլեգմօրէմ, ամսամծ
պողթկումներու խուլ ու մոլեկամ պայթումը կը լսուի համայնակով ամպրոպիմ.
Մարսափմ ու Վիշտը դեռ եղբայրացած դեռ ամերեւութօրէմ ամբացատրելի զգայնութիւններով՝
կը պլլուին կայծակներու գալարումներում, ու կ'երթան խելայեղօրէմ փշրուիլ կաղնիներու ամփոյթ
ու տիրական կեցումաճքիմ յամղիմամ, աղաղակելով յոգմած և ջախջախուած հեկեկամքներով «Մահ,
Մահ...»:
Ղեռ ու բլուր, դաշտ ու ամտառ կը հեւան, կը կքիմ ամսովոր տիրականութեան մը հսկայական
թաթիմ տակ, ու իրեմց իրամները կը քսեն ալէծուփ խաւարիմ մեծղի թեւերում, որ կը բարձրաձայ
սիջցոյն մէջ, ու կ'երթայ զարմուիլ ամտեսանիլ ապառաժեայ պալատներու երկաթէ տիտամեան
դռներում.
Ու դարձեալ կոյր ու ցմորամիտ արիւմարբութիւնը, իր բոցեղէմ մայրածքները սեւեռած հե-
ռաւոր տեսիլքներու հրէշականութեամ՝ կը կոթմի ամտէր և ամպաշտպան հիւղերու պատերում, ու
իր կուրծքիմ վայրագութիւնը կը ջրվէժէ ամդորրաւէտ ապրումիմ երջանկութեամ.
Բայց ո՛վ է սա մոճեստամէմ ամցմող գեղեցիկ և կապուտաչուի աստուածայիմ կոյսը, որ իր
ալէծուփ վարսերը յամծմած ամհօրէմ գողացող վայմասումներում՝ կը մայի սրտատոչոր տեսա-
րամներում, ու խեղդած իր կոյսի մարդկայիմ զգացումի սրբութիւնը՝ կը հեռամայ շտապով դէպ-ի
խաղաղաւէտ ափումքներ... Բայց ո՛վ սարսափ, ահա գալարում մը ամէնէ՛մ սոսկալի տարողութեամբ...
հողէմ կը բարձրանան ու կը շարժին զգայնութեան մը ամէնէ՛մ սոսկալի տարողութեամբ...
Ու դարձեալ, մոճերու կոթմած ստուերներու կոյտեր, իրեմց միմար և այլակերպ վիզերմ եր-
կըմցեցած, գրեթէ ճիւղաղայիմ սարսեցուցիչ արտայայտութիւններով, խոր և շշմեցուցիչ հոգեկան
զօրութեամբ տոգորում՝ լորցումքոտ շրթումքներով կ'աղաղակեն «Եւրոպա՛, Եւրոպա՛...»:
Կեցի՛ր, ո՛վ Եւրոպա, գեղեցկութեամ, ամեկարագրելի հոգեկան գոհիկ տգեղութեան ատրու-
շամ, կեցի՛ր, որ դիտեմք քու սպիտակ, քու բերեղամամ ինքնութիւնդ, ու գարշելի փոքրութիւնը
քու մարդասիրական զգացումներում, կեցի՛ր, որ դիտեմք դեղմութիւնը քու շրթումքներում, որոնցմէ
բողբոջի սպառնալիքի բառ մ'իսկ չելաւ մեր ամիմամալի, մեր սարսափելի հրկիզումիմ համար,
կեցի՛ր...
Ամոնց ձայնը կը մարի յամկարծ, ու յոգմած յամառութիւններով կը գլորին իրեմց հողա-
կոյտներու երկայնքիմ, և կատղած հրէշութեամբ կը խածմեն հողիմ տառապահոծ մայրութիւնը. կը
կծկուիմ իրարու քով, կը մայիմ իրարու խաւարչուտ ակնափոսներում, ու վախկոտ դիւրաբեկու-
թեւումներով կ'արտասուեն իրեմց մահումն ցուրտ և ողբալի յաւիտեականութեամբ վրայ...

Ո՛րքան ցուրտ է, ո՛վ Աստուած, ո՛րքան տենդային սարսուռներով լեցուն է ամէն կողմ, ո՛րքան հառաչանք ու հեկեկումներ:

Ու ահա, սա մերի և ծաւալում դաշտերէն, փոքրիկ և ազազուն մամուկ մըն է որ իր կմախքը կը քաշէ հեւ ի հեւ... Մահուամ մէջ մեծցած ամոր ամմեղութիւնը տիեզերքի ալազամ տառապամքներուն բոլոր ճնշումն ու ծանրութիւնն ունի իր խարխուլ ուսերուն: Ու ամոր մամկակամ, սրտակեղեք ողբերգութեամբ համակում լացը կը բարձրանայ, կը գալարուի ինքն իր վրայ անգորտարածութիւններու բովի մէջ... Կը քալէ յոգմած, իր իմաստուն ճակատը սեւով մրոտած, ու յամկարծ ամոր վտիտ ու դողդոջ բազուկները կը պլլուին կղզիացած ուռնիքի մը թշուառութեամբ, աղաղակելով «Մայրի՛կ, մայրի՛կ...»:

Ա՛հ, այդ ծայմին անտիրական, այդ ծայմին ճնշիչ ու ըմբոստացուցիչ, այդ ծայմին գերմարդկային մտրակող զօրութիւնը բարբարոսներու սրտին ուղղուած:

— Մայրի՛կ, Մայրի՛կ...

Դաշտերը լուռ են, լռած է ալլես ահեղագոռ փոթորկումը երկնային ելքտրականացած ոյժերուն, լռած է գոռը ամդուռից, և գալարում, հեղծուցիչ սպառնալիքը երկնառաք կայծակումներուն:

Նոճիներն ընկղմած լուսացնցող ամպակոյտի մը ճեղքուածքներէն կայլակող լուսնակն մը ցոլքով կը խոկան հսկայական, առասպելական ուրուականներու մամ...:

Լուռ է ամէն կողմ, տեքեմներու, խոտի և շիւղի ամսպառնի մուսգն է որ կը լսուի միայն մերթ ընդ մերթ, և հեզահամբոյր կարկաչումը երկնոտ առուակին:

Ու դարձեալ, հոգիին ամայութեամ մէջ բարձրացող հսկայ մտածումի մը մամ... միտք և սիրտ յուզող, սէր և զգուսմք արթնցնող աստուածային բառն է որ կը շրջի ջուրերու մակերեսին, հո՛ր դակոյտերու թիկունքին և շողակաթ աստղերու ամրջամքներուն բերեղութեամբ մէջ... Մայրի՛կ, մայրի՛կ...:

Ուրուականները կը բարձրանան դարձեալ իրենց փոսերէն, ու կորաքամակ համակերպութեամբ ծանրածանր տուայտամքներով եւ ահաւոր քրքիջներով կը լեցնեն ամդորութիւնը բնութեան... կը քալին աւազներու սարսազեցիկ սուլումով, և եթերին մէջ շառաչող գետերու գոռումով... կը հասնին անտիրական մնացած հայ որբուկին, ու իրենց ջերմ համբոյրներով կը ջանան տաքցընել ամոր մսած, ամոր փոքրիկ կմախք ոտքերուն առջեւ, ու կը զգան արդարութեամ աստուածային օրէնքներուն բռնաբարութեամ ահաւորութիւնն ու անկշռելի բարբարոսութիւնը մարդկային խընձմտամքին:

Մայրի՛կ, Մայրի՛կ... ու հայ որբուկը, սա բնութեան տիրականութեամ առջեւ բարձրացած ազազուն հոգին, սա բողբոխ ահեղագոռ ծայմը մարդկութեամ առջեւ կամգմած, սա ամենէն մոռը, ամենէն գեղեցիկ ու սրբազան մասը տիրականութեամ իր միհար բազուկները դեռ աւելի՛ ուժգնօրէն կ'ոլորէ ուռնիքին մեղամաղծոտ ամտարբերութեամ, և ըմբոստացած, մոլեգնոտած՝ կը փախչի ամեհգրութեամ ուղղութիւններով:

Կմախքները կը շարժին թաւալում և կամշոտ թախծոտութեամբ, կը լեցնեն եթերին լազուարթ բերեղութիւնը, ու կ'երթան իրենց ոսկրուտ ճակատներուն տառապամքով հարուստ մարտիրոսութիւնը քսել երկնքներու լայնածաւալ կապոյտին: Ամոնց ձեռքերը թաւալումներուն հետ սրսփացող օձերու պէս կը շարժին աստղերուն և լուսնին լոյսի ջրվէժներուն շուրջ, ու ամոնց ալմափոսերը կը լայնանան ահազեցիկ արտայայտութիւններով, ու ամոնց շրթունքները կը հեկեկան ամնկարազրելի ծամածուծութիւններով համակում...:

«Լո՛յս, լո՛յս մեր հոգիին մէջ տիրող ճնշիչ խաւարին, լո՛յս մեր ճակատներուն մեռելական դալկութեամ, լո՛յս մեր գոյութեամ, մութին մէջ հիւծող մեր թշուառ գոյութեամ, լո՛յս մեր ամտէն, մեր ջախջախուած, մեր մահասարսուռ ոսկորներու շարաններուն...»:

Մութ է. մոճիները կը շարժին ամծայրածիր տարածութիւններու մէջ, իրենց ուսերուն գիշերը առած... երկնոտ և պաղպաղուն աստղերուն պատմելով հրդեհումը խրճիթներու խաղաղութեամ, և խոշտամգումը վեհագի և առաքիմի ազգի մը զաւակներուն...:

Աստղերը կ'ըմթանամ շողերուն ալօսներուն ըմդմէջէն, ու կ'իյնան տեղատարափ հոսանքով ամդունդներու, ամպատներու եւ ամծիր տարածութիւններու թշուառութեամբ վրայ...:

Ինկէ՛ք, ո՛վ աստղեր, ինկէ՛ք ձեր ամդորաւէտ վայրերէն, ինկէ՛ք ցամուցիլ ոսկորներու հրկիզումին վրայ, ինկէ՛ք, զի մեծութեւն չկայ ուր վիշտը իր կմիքը չէ դրած... ինկէ՛ք ամուր և դողդոջ հայ ոսկորներուն որբութեամբ վրայ...:

Նամ հիմաւուրց բուրգերու տիրականութեամ՝ ոսկրակոյտերը կը բարձրանան անիմամալի խորհուրդներ արթնցնելով մարդկութեամ լռած, շշմած խղճին, և սկեպտիկ արդիականութեամբ մէջ՝ ոսկորները կը բարձրանան... չայ Ազգին մեռելները միմակ են բնութեամ ամհիլ ոյժերուն դիմաց, միմակ են ու լքուած մարդերէն, միմակ ու ամարգուած:

Ու ամդունդները կը գալարուին հոծ և անդիմադրելի, հեղծուցիչ թախծոտութեամ մը աստուած:

ծային զօրութեամ առջեւ... ու ծառերը կ'իյնան, կը փախչին խելագարօրէն վայրագ մառաչանքներով լեցնելով բնութիւնը՝ որուն ամդորութիւնն է խամգարուած... ու դաշտերը կ'ալեկոծին չիմարական երեւոյթներ տալով իրենց արգաւանդ, իրենց մայրական իրաններուն:

Ու Վիշտը, սա երկզխանի հրէշը, սա յալտեմապէս խնդացող խենթը ամէնուն վրայ, իր բոցոտ ալմակապիճները լա՛յն լայն բացած՝ կ'ամցնի տիեզերքին վրայէն, ու կը սուրայ դէպ ի ամծամօթ ափումքներ:

Վիշտը, ամբաժամ բնկերը յաղթողին ու պարտուածին, հերոսին և թշուառին, Վիշտը, հսկայակամ, անիմամալի ստեղծագործութիւնը բնութեամ սոսկալիթխար ոյժին:

Վիշտը, տիեզերքի փոքրկութիւնները բարձրացնող երկնային զօրութիւններու կատարին, միակ տարրը որ մարդս կը կեցնէ աստուածութեամ հորիզոններուն:

Ու յամկարծ մեռելները, զերդ ալիքներ իրենց ափերուն դէմ պայքարող անզուսպ ովկիանոսներուն կը փշրին, վհատած իրենց անհամգիստ փոթորկումներէն:

Համգոյն գիշերային գոլ և տամուկ հոլին՝ ամոնց հոնդիւնները կը ծփան հոլին մակերեսին վրայ: ամոնց հոգիները կը վէտվէտին շիւղերուն մէջ բամտարկուած ցողերու երանութեամ համգոյն, ուր դողդոջագին հառաչանքներ կը լսուին միայն... «Ապրի՛լ կ'ուզեմք, ապրի՛լ կ'ուզեմք ու շնչել սա կենսունակ օդը, որ մեր վրայ կապարի պէս կը ճնշէ, ապրի՛լ կ'ուզեմք ու տեսնել արեւուն հայրենի հողերուն սրբացած տարածութիւնները, ապրի՛լ կ'ուզեմք ո՛վ Մայր, ու տեսնել արեւուն պայթումը հորիզոնին լուսաբողբոջ կատարին, հեզահամբոյր տատանումը բարձրաբերձ ծառերու իրանին, ու ըմպել ամսահմամ բամաստեղծութիւնը առուակներու հոգիէն բխող... ապրի՛լ կ'ուզեմք...»:

Նոճիները դարձեալ իրենց կատարները կը շարժեն խոհերով բեռնաւորուած տիտանեան հըսկաներու մամ, ու ամոնց ստուերները կ'երկնամ դաշտերու և ծործորներու վերեւ, ուր կը ծփան կմախքի և հոգիի փշրամքներ:

Գերեզմանային խորհրդաքող լուծիւն:

Հեռուն տակաւ առ տակաւ հորիզոնը կը պայծառանայ, լուսաստուերի բերաւոր բեկբեկումներ կը խաչածեւուին ամէն կողմ, ու թարմ կենսունակութիւն մը կը շրջի կապոյտ և թափանցիկ թեւերու վրայ թառած...:

Ու հեռունէն, հորիզոնին ստորոտէն, շարք առ շարք, հայ մայրերու սրբութիւնը կը մշմարուի սեւերու մէջ փաթթուած իրենց հասակին բոլո՛ր վեհութեամբ, կը քալին ծամր ու երկիւղած հաւատով, կը քալին ունայնութիւններու սեւ սարսափը ըմբոշեմած, կը քալին գլխիկոր ու տոչորուն, մազացրիլ որբութեամբ...:

Ո՛ր հայ մայրեր, դէպ ի ո՛ր այսպէս լուռ և որբացած, ո՛ր հեռուոր տեսիլքն է ձեր աչքերուն դէմ իր երազի քողերը փռած, դէպ ի ո՛ր...:

Խօսք չունին ամոնք, ցա՛ւ ունին միայն, ցա՛ւ և տրտմութիւն:

Ա՛հ, դալկութիւնը ամոնց ամոյշ և քաղցր երգերուն, մեղամաղծոտ մայուածքն ամոնց աչքերուն երկնային բարութեամ, վիշտն ամոնց հոգիին և ամսահմամ տրտմութիւնը ամոնց ծամր ու մեռելաքայլ ըմթացքին:

Հողակոյտերը կը բացուին, ու շիրմաքարերը կը դրդիլն ուժգնօրէն, ու դարձեալ ձեռքեր ջղուտ ու խելագար, ու դարձեալ բազուկներ մահահոտ մեղամաղծոտ հազարաւոր զալարումներու և ճգոտ արտայայտութիւններու հեղծամահ կամակորութեամբ...:

Մայրի՛կ, մայրի՛կ...:

Գորշ և շնչասպառ ծայմն է մեռելներուն, հոգիի անզուսպ և արտասուալի պոռթկումներ...:

Մայրի՛կ, մայրի՛կ...:

Ու հայ մայրերը կը մային խոր և շշմեցուցիչ մայուածքներով, կը ծոին կմախքներու մեռելապալէն գլխիկոր ու տոչորուն՝ մազացրիլ որբութեամբ...:

Հայ կոյսեր, մոռցած իրենց տարիքին երազն ամհասանելի, մոռցած իրենց հոգիին մէջ փոթորկող անիմամալի խորհուրդներու բեկբեկումը՝ սեւեր են մետած իրենց գլուխին, ու կ'ամցնին հոճեստամին մեղամաղծոտ ուղիներէն:

Ա՛հ, ամոնց մուրը ու ջնաշխարհիկ, ամոնց կուսական էութեամ բոլոր չքմաղութիւնն ամսպառնի և ամհուն:

Կը քալին շարք առ շարք, ու իրենց կոյսի հոգիին եղեմական քաղցրութիւնը կը ծորեն մեռելապալէն ամհունութեամ մը թաքթաքուր ծալքերուն մէջ:

Կը քալին յոգմած, տառապագին և ամծայն, մոռցած իրենց վարդագոյն երազներուն շողշողումը դարձմային արեւներու պրիսմակին մէջ:

Կը քալեն, իրենց քնքշեցի ծոցին մէջ ալիքներու պէս կուտակուող զգայութիւններ փայլա-
յելով ջերմ ու թարմ հպումներով:

Եւ մոռնա՛նք ամէն կողմ, մշտադաւա՛ր մոռնա՛նք, կոյր ու աղօթամբմունք, թախծոտ ու աստուծո՛ւ
ծայրէն մոռնա՛նք:

Ու չայ ճեղքն ամմահ ապրելու չարքաշ, ամվկամդ ու ամխորտակելի Ոգին կապոյտ շղարշի-
րու մէջ փաթթուած՝ կ'ամցնի մեռեալներու ա'լ համզած յուզումներուն վրայէն:

Խաղաղութիւնն ծորերու, լեռներու, ամապամներու ամայութեան մէջ փեռեկտուած հա՛յ մար-
տիրոսներ, խաղաղութիւնն ձեր հոգիներուն:

Ամբողջութիւնն, ու արեւն իր հրաշափառ լոյսը կը սփռէ տիեզերքին վերեւ, շիրմաքարերի
փառումակ սպիտակութեան և ամծայրածիր հորիզոններու տակ համզող անշիրիմ մմացած
կորներու, ամարցունք մմացած հողակոյտերու տրամութեան և յաւիտեակամ ճաւին վրայ...

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՐԱՊԵԱՆ



ՄՈՒՐԱՅԻԿՆԵՐԸ

Գիշեր իջաւ դանդաղօրէն քաղքին վըրայ:
Առանց լացի պատերուն տակ պէտք է պառկիլ:
Մեր փըշրըւած կուրծքերուն մէջ դեռ կը հեւայ՝
Օրուան թախիծն իր արիւնով մահատեսիլ:

Լըռութեան մէջ լուսինն անվերջ՝ բախտի՛ ընկեր՝
Երկնի խորէն թող պըլպըլայ եւ արտասուէ:
Մեր յոգնատանջ մարմիններուն համար անտէր
Անցնող քամին թող մեւանուէ երգեր հիւսէ:

Իշխր, ո՛վ քուն, մեր աչքերուն վըրայ դողդոջ,
Փակէ՛ գանոնք բընութեան դէմ եւ մեր բախտին:
Պահ մը շընջենք սէր եւ յուզում, եւ մեր ամբողջ
Հոգին յանձնենք անդորրաւէտ մոռացօնքին:

Առաւօտուն՝ պիտի գարթնունք լոյսին համար,
Գուցէ հիւանդ, բազմաչարքար ու վիրաւոր:
Եւ ըսկըսինք երէկուան կեանքն, ու վըշտահար
Նորէն իյնանք գետնին վըրան արտասուաթոր:

Մեզմէ շատեր կո՛յր են, աւաղ, ու չեն գիտեր
Արեւն ինչ է, ինչ են երկինք ու մարդկութիւն:
Մէկուն շողին ջերմութեամբ լոկ կ'ըլլան եթեր,
Եւ միւսներուն անտես շունչով կը զգան՝ արթուն:

Իրենց ծընած խաւարին մէջ պիտի մեռնին:
Մինչ կան շատեր՝ որ ատենո՛վ ունէին լոյս,
Այսօր զըրկեալ՝ ամհօրէն կը տառապին,
Անոնց սըրտէն սէրն յաւիտեան տըւած է խոյս:

Կան որ խո՛ւլ են՝ ու բընութեան մէծ երգերէն
Իրենց սըրտին լարերն, աւաղ, չեն ըզգածուիր:
Սակայն կ'ըմպեն լոյսն արեւուն անյազօրէն,
Ու կը սիրեն երկրի ծաղիկն ու ծովն անծիր:

Մարդկային ձայնն իրենց հոգին չէ՛ արիւնշած,
Ներքին աշխարհն ունին ընկեր եւ յակուրջի,
Մերթ նայուածքներն անցորդին կը խընդորեն
Ու սիրոյ շո՛ղն իրենց սըրտին մէջ կը հանգչի:

Իշխր ո՛վ քուն, իշխր մեղմիկ եւ օրրէ՛ մեղ,
Գիշեր մը լոկ մոռցընել տուր մեր ցան անծիր:
Երազներու աշխարհին մէջ տար լուսազէտ,
Եւ սրբազան պաշտումէդ ետք՝ նորէն անցիլ:

Առաւօտուն՝ հողին վրայ՝ գուցէ շատեր
Երգի կարօտ, լոյսի ծարաւ ու անօթի՝
Ըլլան անշունչ, ցուրտէն սառած կամ կիտաւոր:
Կամքի ուժով կորովն իրենց ա'լ չըկանգնիր:

Բըժըշկական սեղանն ըլլայ իրենց դագաղ:
Հասարակաց փոսն՝ անկիրթն յաւերժական:
Առանց լացի, առանց խաչի, գուցէ անթաղ
Երկրէս մեկնին, անիծելով սէր ու խորան:

ՀՐԱԶ ԲԱՆԱՐԱՆ



ԼԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հայ բանաստեղծ դուն տըխուր ես հոգեւին
Վերջալոյսի պէս աշնան,
Ու Քընարիդ լարերը մեր թախիծին
Կ'երգեն խորհուրդը միայն:

Ով դու զաւակ արեւելքին հեռաւոր
Գեղեցկութեան անծանօթ,
Կարծես խաչուած Աստուած մ'ես դու մենաւոր
Տիեզերքին մէջ թախծոտ:

Մարմինդ ինչպէս աննիւթ սափոր բեկբեկուն
Մէջը գաղտնիք ու խոհեր,
Ուր քու հոգիդ սիրոյ քերթուած մ'է անհուն
Իր խորքին մէջ կարեւոր:

Որքան խորունկ տեսիլ ունիս դու կեանքի
Որքան պաշտում գեղեցկին,
Լուսամարմին իմաստութիւնն եւ մըտքի
Աստուածախառն իմ ցեղին:

Դու հինաւորց մարգարէի պէս եկար
Կարմիր մեր հողն անցնելով,
Խօսքերուդ մէջ աստուածային հոգի կար
Ապագային տեսիլքով:

Հին եւ հըպարտ դիւցազնութիւնն իմ ցեղին
Դու բամբուկով երգեցիր:
Ու ծովէ ծով Մայր Հայաստանը կըրկին
Եռագոյնով կապեցիր:

Մըռնեւելով երբ կու լայիր անհանգարտ
Պապերուս ձայնն էր հըզօր,
Ուր պատմութեան խըռովքը մեր բարդ ի բարդ
Կը մըրըրկէր օրէ օր:

Հողին տըւիր կաթն ու գինին քաղցրահոտ
Մայրութեան սուրբ ըզմանքով,

Զաւակն անոր կոթող մ'եղաւ հեթանոս
Քու խօսքերուդ հըրաշքով:

Որպէս ճաճանչ աստուածային քո լեզուն
Սերմն էր յուռթի մեր հողին,
Ուր ծաղկեցան եղեմին քով Մասիսին
Բանաստեղծներ հըրածին:

Մինչ դուն օրհնած ոսկի լեզուակ դողանջի
Հովտէ հովիտ կ'անցնէիր,
Որ շունչ առնէ, երգ ու նըւագ հրեշտակի
Հայ քամանչան սըգակիր:

Այն քո մաքուր ծոցը լեցուած թարմ լոյսով
Նարեկացւոյ գիրքն է սուրբ,
Այն քո ժըպտուն բիւ աչքերուդ խորունկ ծով
Քուչակի սէրն ալէծով:

Ա՛հ քու հոգիդ ամբողջ խորհուրդ, ամբողջ երգ,
Արեւելեան ըզգացում,
Մեր ժամերուն մէջն երկնային դու համերգ,
Մեր երկընքին վերացում:

Ո՞վ քեզ տըւաւ լարն Աստուծոյ մատներուն
Անմահական զարկերով,
Ո՞վ շըրթներուդ բառը դըրաւ հայկազուն
Մեղմ ու քընքուէ հաճոյքով:

Կը լըսեմ միշտ ձայնդ անոյշ ու մեղմիկ
Էութեան մէջ հոգիիս,
Ողջ աշխարհի դուն հեշտ դիւթանք ու գաղտնիք
Եւ ընտանի իմ սըրտիս:

Այս իմ պանդուխտ մենութեան մէջ հոգիիս
Քեզ հետ կ'ապրիմ ամէն օր,
Ուր մեւամաղձ ու մըտածկոտ կը վառիս
Յուզումներով նորանոր:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ